«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՐՑԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Հարց 1. Խորհրդի նախկին նախագահ Ռ. Սարգսյանին լիազորությունների դադարեցման կապակցությամբ ի՞նչ փոխհատուցում է տրամադրվել:

Պատասխան

Հարցին պատասխանեց Խորհրդի նախագահ Սոնա Իշխանյանը: Խորհրդի նախագահին նշեց, որ փոխատուցում դեռևս չի տրամադրվել: Փոխհատուցում տրամադրելու առաջարկը ներկայացված ժողովի հաստատմանը: Առաջարկվող գումարի չափը ներկայացվել է բաժնետերերի ժողովի մյուս նյութերի հետ միասին:

Հարց 2. Արդյո՞ք նախատեսվում է ունենալ առանձին գործընթաց խորհրդում մինորիտար բաժնետերերի ներկայացվածության համար:

Պատասխան

Որպես Խորհրդի անդամ ընդգրվելու համար «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով սահմանված են 4 հնարավոր տարբերակներ. 1) Ընդհանուր ժողովի կողմից ընտրությունը 2) Նշանակալից՝ 10% և ավել մասնակցություն ունեցող բաժնետիրոջ կողմից նշանակումը 3) Բաժնետերերի միավորումը, որի արդյունքում նրանք միասին կունենան 10% և ավել մասնակցություն, և նրանց կողմից միասնական անդամի նշանակումը 4) Մնացած այն բաժնետերերի կողմից, ովքեր չեն միավորվել և չեն առաջադրել միասնական թեկնածու, միասնական անդամի նշանակումը: Նա նշեց, որ վերջին մեխանիզմի առնչությամբ Բանկը ոչինչ անել չի կարող, բաժնետերերը իրենք պետք է միավորվեն և նշանակեն իրենց թեկնածուին: Բանկը նշված մեխանիզմի առնչությամբ քննարկումներ ունեցել է որոշ բաժնետերերի հետ, ինչպես նաև կատարել է ուսումնասիրություններ, բայց այն իրագործելու գործնական լուծում չի հայտնաբերել: Բանկը բաց է այդ հարցի վերաբերյալ հավելյալ քննարկումներին:

Հարց 3. Արդյո՞ք առկա են միջազգային բորսաներում ցուցակվելու ծրագրեր՝ ժամանակի և քայլերի թիրախավորմամբ: Եթե կան, որո՞նք են այդ բորսաները:

Պատասխան

Հարցին պատասխանեց Գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը: Հ. Անդրեասյանը նշեց, որ իր ելույթում՝ Բանկի հեռանկարների մասին խոսելիս, արդեն իսկ անդրադարձել է այդ հարցին: Նշվեց, որ Բանկը նման նպատակներ ունի և արդեն համապատասխան քայլերով շարժվում է այդ ուղղությամբ: Սակայն հաշվի առնելով, որ դա բանակցային գործընթաց է, այլ մանրամասներ չներկայացվեցին:

Հարց 4. Արդյո՞ք կան ծրագրեր մասնաճյուղեր բացելու ԱՄՆ-ում:

Պատասխան

Հարցին պատասխանեց Գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը: Հ. Անդրեասյանը նշեց, որ նման ծրագրեր Բանկը չունի: Միևնույն ժամանակ նշվեց, որ Բանկը շարժվում է թվային զարգացման ուղղությամբ, որի վերջնանպատակն է հաճախորդների սպասարկումն իրականացնել առավելապես թվային հարթակների միջոցով:

Նշվածը նաև հնարավորություն է տալիս հաճախորդներին սպասարկվել նաև ՀՀ տարածքից դուրս:

Հարց 5. Ինչու՞ չբաշխված շահույթը, որը ավելանում է կանոնադրական կապիտալին և ավելացնում է դրա արժեքը և հետևաբար պետք է ավելացնի բաժնետոմսերի անվանական գինը, համարժեք չէ:

Պատասխան

Հարցին պատասխանեց ԳԳՏ տեղակալ, ֆինասական տնօրեն Ստյոպա Զաքինյանը: Պարոն Զաքինյանը նշեց, որ այս տարի Բանկը չբաշխված շահույթի ուղղում կանոնադրական կապիտալին չի նախատեսում: Շահութաբաժինների վճարումից հետո շահույթի մնացած մասը կշարունակի մնալ հիմնական կապիտալի կազմում՝ որպես չբաշխված շահույթ: Չբաշխված շահույթը կանոնադրական կապիտալի ավելացմանն ուղղելու հարցը կարող է քննարկվել հետագայում, բավարար կուտակումներ ապահովելուց հետո: Ֆինանսական տնօրենը պարզաբանեց նաև իրավական և հաշվապահական տարբերությունը. չբաշխված շահույթի հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում մեծանում է միայն տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը, մինչդեռ ընթացիկ

սցենարով՝ չբաշխված շահույթի կուտակմանը զուգընթաց, աճում է բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքը:

Հարց 6. Ի՞նչ սկզբունքով եք հաշվարկում բաժնետոմսի անվանական արժեքը: Խնդրում եմ հարցին պատասխանել սպառիչ:

Պատասխան

Հարցին պատասխանեց ԳԳՏ տեղակալ, ֆինասական տնօրեն Ստյոպա Զաքինյանը: Պարոն Զաքինյանը նշեց, որ բաժնետոմսի անվանական արժեքը հաշվարկվում է Բանկի կանոնադրական կապիտալը բաժանելով տեղաբաշխված բաժնետոմսերի քանակին:

Հարց 7. Ի՞նչ քայլեր են իրականացվում, որպեսզի մատնահետքով վճարում հնարավոր լինի իրականացնել Բանկի միջոցով:

Պատասխան

Հարցին պատասխանեց ԳԳՏ տեղակալ, Թվային պլատֆորմների և տեխնոլոգիաների տնօրեն Տիգրան Սիմոնյանը: Տ. Սիմոնյանը նշեց, որ մատնահետքով նույնականացումը կիրառելի է Բանկի acba digital համակարգ մուտք գործելու համար, եթե համապատասխան հնարավորությունը հասանելի է հաճախորդի կողմից օգտագործվող սարքի վրա: Ինչ վերաբերում է ուղղակիորեն հաճախորդի մատնահետքով վճարում ընդունելուն, ապա նշվեց, որ նման տեխնոլոգիաներ Բանկը չի նախատեսում կիրառել: Նման տեխնոլոգիաների կիրառումը ենթադրում է հաճախորդների մատնահետքերի հավաքագրում, ինչը հանդիսանում է անձնական տվյալի մշակում և նպատակահարմար չի համարվում:

Հարց 8. Քանի որ մեկ բաժնետոմսի արժեքը 32,507 ՀՀ դրամ է, ինչու է բորսայում վաճառվում 15,000 ՀՀ դրամով:

Պատասխան

Հարցին պատասխանեց ԳԳՏ տեղակալ, ֆինասական տնօրեն Ստյոպա Զաքինյանը: Պարոն Զաքինյանը նշեց, որ վերջին ամիսների ընթացքում Բանկի բաժնետոմսերի շուկայական գինը կարգավորվող շուկայում (Հայաստանի Ֆոնդային Բորսայում) կայունացել է 17500-18000 ՀՀ դրամի միջակայքում: Պարոն Զաքինյանի պարզաբանմամբ՝ այդ գնագոյացումը մեծամասամբ պայմանավորված է ՀՀ կապիտալի շուկայի կառուցվածքային առանձնահատկություններով. տեղական

բորսայում ցուցակված են ընդամենը մի քանի կազմակերպության բաժնետոմսեր, և դրանց թվում Ակբայի բաժնետոմսերն ապահովում են շուկայի ընդհանուր շրջանառության և գործարքների ծավալների զգալի մասը:

Որպես շուկայական գնի վրա կապիտալի շուկայի ազդեցության հստակ ցուցիչ՝ ֆինանսական տնօրենը մատնանշեց Գին/Շահույթ (P/E) հարաբերակցությունը: 2025 թվականի արդյունքներով մեկ բաժնետոմսին բաժին ընկնող զուտ շահույթը (EPS) կազմել է ավելի քան 5,900 ՀՀ դրամ, ինչի պայմաններում Բանկի P/E գործակիցը գտնվում է մոտ 2.6 մակարդակում: Պարոն Զաքինյանն ընդգծեց, որ առավել կայացած և զարգացած շուկաներում գործող համադրելի ֆինանսական կառույցների դեպքում այս ցուցանիշը կազմում է շուրջ 6-7: Սա փաստում է, որ Բանկի բաժնետոմսերի ընթացիկ շուկայական արժեքը լիովին չի արտացոլում Բանկի հիմնական եկամտաբերությունը: Իսկ դա վկայում է, որ Ակբայի բաժնետոմսերը թերագնահատված են, դրանք էականորեն կրում են տեղական շուկայի իրացվելիության ցածր մակարդակի ազդեցությունը և ունեն աճի մեծ պոտենցիալ:

Հարց 9. Ակբա բանկը ինչու՞ չի միանում ArcaPay համակարգին:

Պատասխան

Հարցին պատասխանեց ԳԳՏ տեղակալ, Թվային պլատֆորմների և տեխնոլոգիաների տնօրեն Տիգրան Սիմոնյանը: Տ. Սիմոնյանը նշեց, որ Բանկը նշված համակարգին դեռևս չի միացել: Միևնույն ժամանակ բանկը վերջերս գործակել է Arca QR վճարումները: ArcaPay համակարգին միանալու մտադրություն ևս Բանկն ունի: Տվյալ համակարգը Բանկի միջոցով հասանելի կդառնա Բանկի թվային առաջնահերությունները հաշվի առնելով: Խոսվեց նաև առաջիկայում գործարքվելիք BNPL (Գնիր հիմա, վճարիր հետո) լուծումների մասին, որի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություն հանրությանը կներկայացվի համապատասխան գովազդային հարթակների միջոցով:

Հարց 10. Ակբա Բանկի ապագան՝ 5-10 տարի հետո:

Պատասխան

Հարցին պատասխանեց Գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը: Հ. Անդրեասյանը խոսեց մինչև 5 տարվա կտրվածքով հեռանկարների մասին: Խոսվեց

միջազգային բորսաներում ցուցակվելու նպատակներից: Նշվեց, սակայն, որ միջազգային բորսայում ցուցակվելը ինքնանպատակ չէ: Դա հնարավորություն է աշխարհագրական առումով տարածվել այլ երկրներում:

Դրան կնպաստի նաև ԱԲ միջոցով Բանկի տրանսֆորմացիան: Նախատեսվում է, որ այդ ժամանակահատվածում Բանկը կունենա բարձր մակադակի ԱԲ լուծումներով աշխատող համակարգ: